

ռին. եւ եր՝ զոր ոչ կարացին առնուլ: 10 Եւ գային պահ արկանէին շուրջ զԱնգեղ զամուր բերդան, որ է յԱնկեղ տանն գաւառին. զի անդ էին բազում Հայոց թագաւորացն գերեզմանք շիրմացն արանցն Արշակունեաց. բազում գանձք մթերեալ մնացեալ կային ի նախնեացն ի հնոց ժամանակաց հետէ: 11 Չուան պահ արկին զբերդան. ապա իբրեւ ոչ կարէին առնուլ վասն ամբողջեան տեղոյն, թողուին եւ գնային: 12 Եւ զբազում բերդաւք զանց առնէին, զի ոչ կարէին մարտնչել ընդ ամուրսն. բայց միայն մատնեցաւ ի ձեռս նոցա ամուր բերդն Անի ի Դարանաղեաց գաւառին անդ, զի չարագործն Մերուժանն հնարաւորութեամբ մեքենայեր ամուր բերդին այնմիկ: 13 Եւ անէին ի վեր, եւ կործանէին զպարիսպ նորա, եւ իջուցանէին անթիւ գանձս ի բերդէն: 14 Եւ բանային զգերեզմանս զառաջին թագաւորացն Հայոց զարանց քաջաց զԱրշակունոյ, եւ խաղացուցանէին ի գերութիւն զոսկերս թագաւորացն. բայց միայն զգերեզման շիրմին Սանատրկոյ արքային ոչ կարացին բանալ վասն անհեղեղ սկայագործ հաստաշինած ճարտարագործ արարածոցն: 15 Ապա գնացեալք անտի ի բաց մերժէին, ընդ այլ դիմեալ՝ ասպատակս կապէին, ընդ կողմանսն Բասենոյ յառաջ խաղային եւ ինքեանք, կամէին ի թիկանցն կուսէ անկանել հասանել ի վերայ զաւրացն թագաւորին Հայոց:

16 Ապա մինչ դեռ այս ամենայն լինէր, զուժկան հասանէր առ թագաւորն Արշակ, եւ ասէն նմա. Դու աւադիկ առաջոյ սպասես թշնամեացն, նստիս յԱտրպատականի. իսկ թշնամիքն զթիկամբք անկեալ կոտորեցին զաշխարհս. եւ արդ դիմեալ զան ի վերայ քո: 17 Ապա իբրեւ զայս լսէին թագաւորն Հայոց Արշակ եւ զաւրավարն Նորին Վասակ, հանդես առնէին զաւրացն իւրեանց: 18 Եւ գտան ի ժամանակին անդ ընդ ձեռամբն զաւրավարին Վասակայ արք գործոց իբրեւ վաթսուն հազար, ընտիրք եւ պատերազմողք, որ միամիտք եւ միասիրտք էին միաբանութեան գործոցն պատերազմին, հասանել մարտնչել ի վերայ որդւոց եւ կանանց իւրեանց, եւ ի վերայ աշխարհին դնել զանձինս իւրեանց մինչեւ ի մահ եւ ի վերայ աշխարհին գաւառացն բնակութեան, հասանել մարտնչել ի վերայ եկեղեցեացն իւրեանց, ի վերայ ուխտին պաշտամանն սրբոյ եկեղեցեաց իւրեանց, ի վերայ հաւատոց ուխտին անուան Աստուծոյ իւրեանց, փոխանակ բնակ տերանց իւրեանց Արշակունւոց: 19 Չի անգամ ոսկերք թագաւորացն մեռելոց եւ բազում ժողովուրդք խլեալք յիւրաքանչիւր տեղեաց, փոփոխեցան յաւտարութիւն:

20 Ապա Վասակ սպարապետն հանդերձ վաթսուն հազարաւք յառաջ խաղայր, դարձեալ ընդ կրուկ թողոյր զթագաւորն Արշակ յամուր տեղւոջ ուրեմն յերկրին Մարաց, հանդերձ սպասաւորաւքն: 21 Եւ ինքն գայր հասանէր ի միջնաշխարհն Հայոց ի գաւառն Այրայրատու. եւ հասանէր գտանէր զգաւրսն Պարսից, զի հասեալ մածեալ էին բազմութեամբ իբրեւ զաւագ առ